



ՄԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ

Մամուլի իւրաքանչիւր շրջանը 32 օրինակ է :
Ստորագրութեան անդին է Կ. Պօլիս, Մեծ Նոր խան վերի յարկ Թիւ 6 :
Դուրս երթալիք փոստային ծախքը ուսնողին վրայ է :

Շրջանին գինը կէս ժամ. ոսկի 30
Մէկ ժիւր դոսեկան արծաթ 1
Անվճար նամակ չընդունուի : — Մանուցման տողը 5

Թիւ 805 ԺԳ ՏԱՐԻ ՇՐՋԱՆ ԺԶ.

1881

ՇԱՐԱԹ 9 ՄԱՅԻՍ

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ի Ի Թ Ո Ց

Ազգային լուրեր . — Ահեղ դատաստան . — Տարեդարձ .
— Թօրգարու . — Ձուարճալիք . — Ժամանակագրականք . —
Ապտիւլ Ազիյի սպանման պարագայները . — Ազգ ընտրող
ժողովոյ Խաղիւղի :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն . Ս . Պատրիարք հայրն այս եչ . առաւօտ Ա . Նախարար Սայիտ բաշային ապարանքն երթալով տեսակցութիւն մը ունեցեր է , եւ ինչպէս որ թագրիւրով մը արդէն ծանուցած էր , բերանացի ալ նաեւս պահանջեր է թէ՛ Արապկիրի առաջնորդ գեր . Եզնիկ եպիսկ . մայրաքաղաքս եկած ըլլալով ըստ հրամանի Բ . Դրան , Արապկիրի գայմագամն ալ հոս կանչուի որ Առաջնորդին հետ դատուի :

Ս . Պատրիարքն անկէ ելնելով , պատերազմի պաշտօնեայ Ղազի Օսման փաշայի ալ մասնաւոր այցելութիւն մը տուեր է :

— Ս . Պատրիարք հայրն նոյն օրը ժամը 4ին միջոցները Ղալաթիոյ եկեղեցին իջնելով , երեսփոխանական ժողովը բացաւ համառօտ ասեռաբանութեամբ մը , յորում ժողովոյն նախորդ աշխատութեանցը մասին շնորհակալութիւն յայտնելէն յետոյ , ծանոյց նաեւս թէ վարչական խորհրդոյ առաջարկութեանն համեմատ յանձն տուեր էր տակաւին 2 աւիս ալ Պատրիարքութեան պաշտօնը շարունակելու եւ անկէ ետքը հրաժարելու , որոյ պատճառ զլիսաւորապէս իւր վատաւողջութիւնը յառաջ բերելով , իրմէն աւելի քաջառօղջ անձ մը պատրիարք ընտրելու պէտքը բացատրեց : Յետոյ երեսփոխաններէն Պ . Ք . Ղազարոսեանի ատենապետութեամբ , եւ կրտսերագունին Պ . Մ . Զօսյանեանի ատենադպրութեամբը սոժամանակեայ զիւան մը կազմուելով , երեսփոխանութեանց վերաբերեալ 75 դրշի ազգ . արոց վրայ վիճաբանութիւն մ'ըլլալէ ետեւ , ատենաը զոցուեցաւ յաջորդ նիստը Յունիս 4ին ըլլալու որոշմամբ , մինչեւ որ երեսփոխոր ընտրութիւնը աւարտին :

— Ս . Պատրիարքը կիսրոսի անդգ . կուսիւրէն իւրնդ-

րած ըլլալով որ կղզւոյն վարչական ժողովին մէջ հայ անդամք ալ գտնուին , Ն . Ասեմութիւնն այս անգամ պատասխան մ'ուղղելով Ս . Պատրիարքին , ժողովոյ կանոնագիրն հաղորդեր եւ խոստացեր է թէ ժողովոյն նորոգ կազմութեան ատեն հայ անդամներ ալ պիտի ընդունուին :

— Ստոյ Աթոռոյ կալուածներէն , Բայասի մէջ գտնուած ազգ . գետին մը՝ կուսակալութեան կողմէ՛ անուրդի հանուելալ , Ս . Պատրիարքը միջոցներ ձեռք առաւ սոյն վաճառումն արգիլելու եւ տեղական կառավարութեան հաճութեամբը ու Ստոյ վեհ . կաթողիկոսին առաջարկութեամբը՝ փոխանորդներ առաջարկեց Ատանայի մէջ , Ազգին սեպհականութիւնը տըրութեան առջեւ պաշտպանելու համար :

— Ամասիոյ Եղեթեան սրբազանի վրայօք գանդաններ հասնելով ի Պատրիարքարան , վարչական խորհրդոյն որոշեց զինքը մայրաքաղաքս հրաւիրել :

— Վարչ . խորհուրդը Վանայ վիճակին ազգ . վանուց վիճակը բարեկարգելու համար՝ որոշեց Վանայ մէջ Գեր . Սըրուանձտեանց Գարեգին վարդապ . ի նախադահութեամբ Յանդամք բարեկարգեալ վանօրէից , Հոգաբարձութիւն մը կազմել յատուկ հրահանգով մը , որպէս զի նոյն վանուց բարեկարգութեան ծրագիր մը պատրաստելով կեդր . Վարչութեան ներկայէ , եւ պաշտօն ունենայ նոյն վանուց ելեւմտիցն ու կալուածոցը վրայ նկելու եւ հաշիւներն Վարչութեան հաղորդելու :

— Եզնիպոսի գաւառական Ընդ . եւ Քաղ . ժողովոց ընտրութիւնն կատարուած եւ հոս տեղեկագրուած ըլլալով , Վարչութիւնն օրինաւոր գտեր եւ ընտրութիւններն վաւերացուցեր է :

— Շապին-Գարահիսարի Ազգաէր դիւղի աղղայնոց կողմէն սրքունի տրոց հաւաքչաց զէմ՝ գանդատներ վնելով թէ քմահաճ անխրաւութիւններ կրնն , վիճակին առաջն . Տեղ . ներկարարեան գեր . Պետրոս Մ . վարդապետին յանձնարարուելիք է անմիջական քննութիւն մը բանալ , եւ զեղծմանց պաղաքն աննելով արդիւնքը Պատրիարքարանի տեղեկալորելու :

— Թերթերնիս մամուլը զրուած պահուն լուր առինք թէ վաղը Մայր եկեղեցւոյ մէջ Ս . Պատրիարք հայրը Ս . Պատարաբ պիտի մատուցանէ դպրաց դասուն վախճանեալ անդամոյը հաղւոյն համար :

Ս Հ Ե Ղ Գ Ս Տ Ա Ս Տ Ա Ն

Վերջին օրերս Թուրքիոյ բոլոր ժողովրդեան ուշադրութիւնը տարապայման կերպիւ գրաւած է երջանկայիշատակ Ապտ-իւլ-Աղիզի սպանման պարագայիցը վրայօք բացուած խիստ քննութիւնը, որ գրեթէ ամէս մ'ի վեր է կ'շարունակուի, յորմէ հետըցհետէ աղեկտուր դաւաճանութեան մը մէջ նշանաւոր նախարարաց և պետական անձանց ալ մեղսակցութիւն ունենալը յայտնուելով, հինգ տարի առաջ կատարուած պաշտօնական սոսկալի դաղտնիք մ'երեւան կուգայ, որ ամեն հայրենասէր սրտերու մեծ ցաւ ու կսկիծ պատճառելով, անհամբեր ողբով քննութեան վախճանին կսպասեն:

Վեհ. Սուլթան Համիտ Բ. կայսրը այսպիսի քննութեան մը հարկն զգալով, զայն անմիջապէս բանալ հրամայելը՝ յաւէտ իւր բարձր արդարասիրութեանը անջնջելի ապացոյց մ'ըլլալէն զատ, իւր թագաւորութեան օրովն ալ Օսմանեան պատմութեան մէջ այնպիսի փառաւոր էջ մը պիտի աւելցնէ, որոյ արժէքը եթէ ներկայ ժամանակը չկարենայ խոյ գընահատել, տարակոյս չկայ թէ դար մը վերջը բոլոր աշխարհ հիացմամբ եւ զարմացմամբ պիտի դրուատէ Վեհ. Սուլթան Համիտ Բ. կայսեր արդար վրէժխնդրութիւնը, եւ իւր առաջին պաշտօնեայ Սախա բաշայի անաչառ կորովամտութիւնը:

Մինչև ցարդ կատարուած հարցաքննութիւններէն ստուգուած է թէ՛ տարաբաղդ Սուլթան Աղիզ կայսեր սպանութեան դիտաւոր հեղինակները հինգ նշանաւոր նախարարներ եղած են, որոնք ժամանակին մեծ Եպարդոսութեան եւ Սպարապետութեան պէս բարձր պաշտօններ վարած ըլլալով, այսօր իբրեւ արքայասպան ոճրագործ դաւաճաններ կը նշկատուին:

Պէտք չէ մոռնալ թէ, այս Պետական անձանց մէջ ամենէն նշանաւոր տեղը բռնողն է Միահասա փաշայ, որոյ ասկէ առաջ երկու անգամ Եպարդոսութեան պաշտօնին բարձրացած ատենը, երկրին բոլոր ժողովուրդը միաբերան և լրաթերթք ոսկեգօծ շրջանակօք հրատարակութիւններով, «Վերանորոգիչ հայրենաց» արտոգորք նուիրեցին իրեն, մեծամեծ յոյսեր ակնկալելով իրմէն, մինչդեռ այդ վերանորոգիչն այսօր իբրև յանդուգն դաւաճան մը դատաստանի կենթարկուի:

Օսմանեան պետութեան մէջ Ապտիւլ Աղիզի նըման իր երկրին իրական ծառայութիւն մատուցանող և հայրենասէր կայսր մը, համարձակապէս կ'ըսենք թէ՛ շատ հազուադէպ է:

Իւր օրովն էր որ օսմանեան նաւատորմիցը իրօք նաւատորմից կոչուելու փառաւոր վիճակն ստացաւ այնքան ասէր զրահաւորներովն ու մարտկոցաւոր թնդանօթակիրներովը:

Իւր օրովն էր որ արքունի թնդանօթարանը իրեն անուանը արժանի վիճակ մ'ստացաւ թնդանօթներ ձուլելով և պատերազմական նորանոր դործիներ պատրաստելով:

Իւր օրովն էր որ արքունական փառաւոր պալատներ կանգնուեցան:

Իւր օրովն էր որ Վստրբի և Տարտանելի երկու նեղուցներուն այն ասհագին ամրութիւններն շինուեցան:

Իւր օրովն էր որ զինուորանոցներ, զինարաններ շինուեցան:

Իւր օրովն էր որ հին դէնքերն Շասոյի և Հանրի-Մարթինի նման նոր դրութեամբ ասեղնաւոր հըրացաններու փոխուեցան, և Քրուբի ու Սրմթրօնկի թնդանօթներով երկիրը մեծ զօրութիւն ստացաւ:

Իւր օրովն էր որ զօրաց համազգեստներն գեղեցիկ ճաշակաւ մը բարեփոխուեցան, զինուորաց կանոնաւոր կերպիւ ամսականինն վճարուելով, ամեն տեսակ ուտեստն ու ռոճիկը ամենէն ընտիր տեսակէն տրուելով ու հոգացուելով՝ բանակը կենդանութիւն առաւ, մինչդեռ իւր նախորդաց օրով զինուորաց ուտեստն ու հագուստը անբացատրելի . . . տխուր և ցաւալի վիճակի մը հասած էր, զոր նկարագրին համեստութեան դէմ է:

Իւր օրովն էր որ Օսմանեան Սուլթան մը, առաջին անգամն ըլլալով, Եւրոպայի օտար Պետութեանց արքունիքներն այցելութեան դնաց, և հոն տեսնելով Եւրոպական աէրութեանց երկիրներուն եւ Թուրքիոյ մէջ կեցած անհուն տարբերութիւնը, ձեռք զարկաւ իր երկիրն ալ Եւրոպիոյ միւս զօրաւոր երկիրներուն հաւասար վիճակի մը մէջ դնելու:

Իւր օրովն էր որ առաջին անգամ, առանց կըրօնի և աղգի խտրութեան, Թուրքիայէն պատանիներ զրկեց Պետութեան ծախիւքը Եւրոպայի բարձրագոյն վարժարաններն, հոն զինուորական, անասագիտական եւ երկրագործական ուսմունքնին կատարելագործելու, վերջէն ալ զանոնք Օսմ. Պետութեան ծառայութեանը մէջ օգտակարապէս գործածելու համար:

Իւր օրովն էր որ Օսմանեան Սուլթան մը վախճանած վայրկեանին կայսեր անձնական գանձուն մէջ 6-7 մլիոն ոսկւոյ պատրաստ գումար մը գտնուելը առաջին անգամ տեսնուեցաւ, եւ որ վերջէն երկրին նոյն պահուն ունեցած անմիջական, անհրաժեշտ և ամենակարեւոր պիտոյիցը դործածուեցաւ:

Վերջապէս իւր օրովն էր որ զինուորական դրօշը, բժշկական դպրոցը բարեկարգուեցան, Սուլթանիէի Լիսէն բացուեցաւ, Արուստական արքունի վարժարանը հաստատուեցաւ, Եւրոպական փոխառութիւններն յաջողեցան, մէկ խօսքով 17-18 տարի թագաւորեց երկրին ամեն պէտքերն հոգալով ու եւրոպական տէրութեանց հետ իւր բարեկամական յարաբերութիւններն պահելով, առանց կաթիլ մ'արիւն թափելու :

Այսպիսի չքնաղ և հայրենասիրական գործերովը փառաւորեալ հանճարեղ և հեռատես կայսր մը, անխիղճ դաւադրութեամբ, գիշերով դահէն վար առնելէն յետոյ, քանի մ'օր վերջը գաղանական անդրթուլթեամբ զինքն իւր պալատին մէջ սրախողխող սպաննողներուն՝ երկրին եւ հայրենեաց դաւաճաններէ զատ ուրիշ անուն մը չկրնար արուիլ, եւ որք ինչքան բարձր աստիճանաւորներ ալ ըլլան, հարկ է և արդարութիւնն ալ կ'պահանջէ որ իրենց արժանաւոր պատիժը կրեն, մինչեւ իսկ եթէ կախաղան ալ հանել պէտք ըլլայ :

Չայս կ'ըտզքէ իւր կայսերական դամբանին մէջէն երջանկայիշատակ Սուլթան Ապտ-իւլ-Ալիզի անմեղ աճիւնը, զայս կ'պահանջէ օրինաց արդարութիւնը, եւ զայս կսպասեն նոյն իսկ սպանեալ կայսեր գերգաստանին բոլոր իշխանագուն անդամներն եւ երկրին ամբողջ ժողովուրդը :

ՏԱՐԵԴԱՐՉ

Այսօր Մայիսի 9 է :

Երկու շաբաթ մնաց Մայիս 24ին :

Այս տարի եւս ըստ սովորութեան ազգային Սահմանադրութեան 21րդ Տարեդարձը կատարելու համար պաշտօնական յայտարարութիւն մը մինչեւ ցայսօր դեռ չտեսնուեցաւ :

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը ամեն տարի մեծ փութով ու եռանդեամբ սոյն հանդիսին կատարման համար հարկ եղած մեծամեծ պատրաստութիւններն օր առաջ տեսնելուն հակառակ, այս տարի կը լսեմք թէ վարանման մէջ ինկած դեռ պատրաստութեան մը ձեռք դարկած չէ, որպէս թէ կառավարութեան կամացը հակառակ գործ մ'ըրած չըլլալու համար :

Հոգաբարձութիւնը, եթէ ստոյգ է այս, մեծապէս կը դիտարկ այս կերպ մտածելով, վասն զի նախ բարեխնամ կառավարութիւնը երբէք արգելք դրած չէ այն բաներուն՝ որոց ինքը արտօնութիւն տուած է եւ 20 տարիէ ի վեր ալ անընդհատ կը շարունակուի առանց մէկ փաստկար կողմէ տեսնուելու :

Երկրորդ՝ բարեխնամ կառավարութիւնը բնաւ մտքէն իսկ չանցնէր արդիւն Հայոց ազգին՝ տարին մէկ կամ երկու անգամ այսպիսի առիթներով երթալ իւր ազգային Հիւանդանոցին մէջ պատուպօրեալ հիւանդներն, անկեալներն, որ-

բերն ու աղքատները այցելելու եւ զանոնք բարոյապէս թէ նիւթապէս մխիթարելու :

Երրորդ՝ բարեխնամ կառավարութիւնը ինքն ալ մինչեւ ցարդ հասկցած է եւ դիտարկ, մէք այս Սահմանադրութեան Տարեդարձը՝ Վե. Սուլթան Համիտ Բ. ինքնակալին երջանկայիշատակ Հօրը՝ Սուլթան Ապտիւլ-Մեճիտ կայսեր մեղի չնորհած ազգային վարչական կանոնադրութեան մը հաստատութեանը նուիրական հանդէսն է, զոր կը տօնէ ամեն տարի Հայոց ազգը, եւ որ թէ՛ Օգոստոսիան Սուլթանին, թէ՛ կայսերական գերդաստանին բոլոր անդամոցը եւ թէ՛ իւր նախարարացը անդին կենացը համար արթթներ եւ բարեմաղթութիւններ քնելէ անդին չանցնիր :

Ընդհանրական ամեն տարի տօնած սոյն ազգային հանդէսնիս եթէ այս տարի կատարելէ ետ կենանք, թէ՛ 20 տարիէ ի վեր անընդհատ շարունակուած նուիրական սովորութիւն մը աւրած, եւ թէ՛ այսպիսի անհնգ հանդիսի մը նարտակին վրայ տարապարա կասկածանքներ հրաւիրելու պատճառ եղած կըլլանք :

Պէտք է դիտարկ թէ բարեխնամ կառավարութիւնը ազգէկ աչօք չնայիր եւ նշանակութիւն կ'տայ այն բաներուն՝ որ նոր են, իսկ այն ամեն հին եւ վաղեմի սովորութիւնքը, որոց մինչեւ ցայսօր մէկ փաստ չէ տեսնուած, եւ որք միանգամայն մարդասիրական եւ բարեպաշտական սովորութիւններ են, զանոնք կայսերական կառավարութիւնը ո'չ միայն չարդիւնէր՝ այլեւ կը յարդէ ալ :

Սոյն թիւրիմացուից այսքան ինչ պարզելէ եւ անհիմն կասկածներն փարատելէն յետոյ, սա՛ եւս յիշեցնել հարկ կը համարիմք Պատուարժան Հոգաբարձութեան որ հազիւ մէկ ամիս առաջ երբ ինքը՝ Հիւանդանոցի մատակարարութեան նեղ եւ անձուկ փիճակէն հարկադրուած, Արշութեան դիմելով կառավարիչը որ կամ իւր հրաժարականն ընդունի եւ կամ արտօնութիւն տրուի իրեն Հիւանդանոցին բոլոր պատրաստակներն արձակելով միմիայն հիւանդներն ու անկեալներն հոն պահելու եւ խնամելու, Արշութեանն այն ատեն սա՛ պատասխանը տուեր էր իրեն թէ՛

« Խղճներուդ կը թողունք, ինչպէս որ կուղէք՝ այնպէս ճըրէք : »

Այս խղճի կետը, որ ամենէն սրբազան եւ նուիրական կեսն է, մեծ պարտականութիւն կը թողու Հիւանդանոցի Հոգաբարձութեան վրայ, որ այս տարի եւս փութայ հրաւիրել հայ հասարակութիւնն Ս. Փրկչի ազգային Հիւանդանոցը, թէ՛ Ազգային Սահմանադրութեան Տարեդարձի հանդէսը տօնելու եւ թէ՛ այս առթիւ Ս. Փրկչի անոք եւ թշուառ պատուարեալներն մխիթարելու, որոց համար ճշգրտած մէկ լուսնայն՝ մեծ նշանակութիւն ունի աղքատաց հանրական Հօրն, Նախախնամութեան առջեւ :

ԹՕՓԳՍԷՈՒ

Թօփղարույէն հետեւեալ նամակն ստացած ենք ի հրայտարակութիւն :

... Թմբաղիր Մատուլ պատուական լրագրոյ Պատուական լրագրոյդ 804 թուոյն մէջ թագիս երկսեռ վարժարանաց նպաստելու նպատակաւ կազմուած ընկերութեանս՝ նախորդ կիրակի դրօսարանը բերել տրուած նուագածոններու նկատմամբ համառօտ յօդուած մը գրած

էիք, ծանուցանելով թէ ընկերութեանս անդամները յիշեալ նուագածունները իբր թէ բռնելով գանակոծեր են, եւ ըստ այնմ դանակոծեալք իսկ ոստիկանութեան դուռը գատ բացեր են: . . . Տէր, յիշեալ իրողութիւնը բոլորովին սուտ եւ անտեղի է եւ սեւէ տեղէ մը դատուելու համար մեզ կանչող չեղաւ ցարդ, ուստի, Տէր, կաղաչեմք ձեր արդարասիրութենէն որ վերոյիշեալ անհիմն տեղեկութիւնը ո՞ր-կէ լեցիք եւ իմացաք նէ՛ բարեհաճիք յականէ՛ յանուանէ՛ ծանուցանել դարձեալ լրագրոյդ միջոցաւ, որով մեք եւս տեղեկանալով կարողանամք գործադրելու պարտ ու պատշաճը ինչ որ արժանն է:

Ընդունելով կանխաւ ընկերութեանս շնորհակալիքը, բարեհաճեցէք հրատարակել օոյն երկտողս յառաջիկայ թերթիդ միջոցաւ ի պատասխան նոյն յօդուածոյդ:

Որով մնամք միշտ անկեղծ
 7 մայիս 81 ի Դիմաց Լեւոնեան Դպրոցարգ. ընկ.
 Թօփ գաբու Ատենադպիր Ատենապետ
 Գրէիք Գաբա՛մէան Սարգիս Խնասէ՛ան

* * — վերոյիշեալ նամակագիրը որչափ որ կ'պընդեն թէ այդպիսի դէպք մը չէ պատահած, այսօր տեղեկութեանս անձկութենէն հարկադրեալ, յաջորդ թերթիով պիտի հաստատենք տեղովն ու անձինքներովը թէ այդ իրողութիւնը ստուղիւ տեղի ունեցած են, աղգային ընկերութեան մը պատուոյն և արժանեացը բոլորովին անվայել կերպիւ:

ՉՈՒԱՐՃԱԼԻՔ

Ներէյէ՛ պէօյէ՛ աճէյէ՛, Պ. Գերգոր. նէ՛ դօշուօրսուն .
 — Խաւքէօյտէ՛ աճէյէ՛ պիր իշիմ՝ վար, վարօրա եէթիչէճէյիմ .
 — Խաւքէօյ՛եմի կիտէճէքսին, էկէր աճէյէ՛ իշին վարտա, չափուք կիթմէք իթէրսէն գայըղա պինսէն տահա էյի եաբարսըն .
 — Նէ՛ տէյօրսուն, դարտաչ, վաբօ՞ր մու չափուք կիտէր գայըղ մը .
 — Դայըգ չափուք կիտէր, վափօր Փարաշամ տօյաշըր .

* *
 Իերայի ժառտէնը,
 — Միւսի՛ւ ժօրթ, սանա եագըըր՝ մը, էվի պարբըր օլաճագսըն, մատմաղէլերէ հարֆ աթմագայըպ տէյի՛ մի .
 — Պէն շիմտի պէքեար սայըլըբըմ՝ .
 — Նէտէ՛ն պէքեար սայըլըյօրսուն .
 — Իքի հաֆատատան պէրի պիղիմ մատամ Գօրույա կիթտի, մատամնըղ դալան պէքեարլարա թաշ չըգարըր .

Նե՛րտէսին Պ. Յակոբ, կէօրիւնմէյօրսուն, պուրնուն պէօյիւտի՛ւ մի կայըր .

— Էօյլէ՛ պուրուն պէօյիւքիւլիւ Քիլան չօգտան տիւնեատան գալգալը,
 — Նէտէ՛ն .
 — Տիւնեատա փարայ դէնկինիւր դալմատը քի պուբունլար տա պէօյիւսիւն, շիմալքի պուրունլարտա պէօյիւքիւք տէ կէօրիւրսէն՝ օտա սալթ նէղլէ էսէրի տիր .

* *
 Պոյոյ կոզմը երկու բարեկամ միասեղ գացած ատեննին,
 — Քի՛մ աիր պու սէլամ վէրաիյին զաթ,
 — Պիղիմ տօքթօր տըր իշտէ,
 — Աճայը՛պ, պու նէ պիչիմ տօքթօր,
 — Նէ՛, տօքթօր օյտուլունա ինան մայօրսուն,
 — Եօ՛ք ինանտըմ ա՛, Քաղաթ տօքթօրուդա հիչ պիր եագըըր եէրի եօգ .
 — Նէտէ՛ն .
 — Պա՛գսանա, էքմէքճի ուստասընա պէյնղէր պիր ատամ:

* *
 Մատմաղէլ Լուսի՛կ, պու սէնէ Պօղապիչինէ չըգմայաճագմըսընըղ .
 — Ֆիքրիմիդ վար չըգմայա .
 — Էյ նէ՛ վագթ չըգաճագսընըղ, Չատիյին բըրբըտա չըգըյօր իշտէ .
 — Վա էօյլէ՛ ամա, նէ՛ պիլէյիմ պու սէնէտէ նասըլ իչ օլտու, կէչէն կիւն Եէնիմահալլէտէն պիղ պիր միսաֆիր կէլտի, օ տէտիքի Պէօյիւքտէրէտէ գար եագմըչ տէյի:

* * *
 Երկու խմբագիր տեսակցութեան մը մէջ
 — Ինչ ընեմ բառեկամ, որ բաժանուղինեուս ամենքնալ տանեկան դուռին, վեցամսեայ կրամ եռամսեայ չըգուռին .
 — Ատկէ աւելի դիւրին ինչ կայ,
 — Կաղաչեմ, սրվու դիւրին միջոցը ըսէիք, աղգային դռանկանութեան մեծ և նշանաւոր ծառայութիւն մը պիտի մատուցանէք. ո՞նէ է այդ միջոցը:
 — Թերթիդ տարեկան գինը ինչ է .
 — Հինգ մէճիտ .
 — Լաւ, վեցամսեայն 10 մէճիտ ըրէ, եռամսեայն ալ 15 մէճիտ. այն ատեն ամենքնալ տարեկան կ'գրուին .
 — Շնորհակալ եմ, ես ալ քու այս ըռած ծառայութեանդ ի փոխառնութիւն, թե՛րթիւ մէջ քիդ ալ եռեափոխանական ընտուելի կ'նեալայացնեմ .

Պու սէնէ պանա բէք դազը կէլլյօր .

—Նէրի՞ն .

—Նէ՞ իշ թութսամ դազը թէփէմտէն չըղլօր .

—Պու սէնէ հէփիմիղէ՛՛տէ էօյլէ օյսու .

—Պիմէմ քի նէ՞ իշ թութայրմ .

—Նէ՞ իշ թութարսան պու սէնէ դազը տըր .

—Նէտէ՞ն .

—Սէնէ 1881 , կէօրմէյօրմուսուն , հանկը Վի- նա չէվիբէն , իբի թարաֆը տա դազը տըր .

Երկու սպասաւոր * *

—Քու չէլէպիդ շատ կ'սիրե՞ս .

—Այո՛ , յոյն է ամա , շատ կ'սիրեմ . հէմէն կըր- նամ ըսել որ հայուն մէջ անոր պէս աղէկ մարդ չը կայ .

—Աղէկ ամա յոյները քիչ մը բարկասիրտ կըլ- ան , քիչ մ'ալ շատկէկ կ'հայհոյեն .

—Իմ չէլէպիս բնաւ հայհոյութիւն ըսուած բա- նըն ինչ է՝ չգիտէ , թէոր սխալ մը գործեմ տէ բար- կանալու ըլլայ նէ՛ ամենէն մեծ հայհոյութիւնը սա է . «Պոյուք թավուք , նիցին աննամասին . »

—Տահա ասկէ անդին ի՞նչ պիտի ըսէ որ .

—Ինչէ՞ն , պէօյիւք թավուք ըսելով ի՞նչ կըլլայ .

—Քեզի խաղ կընէ կոր .

—Նէ՞ մինասիպէթ , ադ մխտքով չէ .

—Իուն իրաւ խաղ օղու խաղ ես եղեր ա՛ .

Սուտ խօսիլը շատ սիրող էֆէնտիին մէկը այն- քան շատ սուտեր կ'նետէ եղեր որ , քովի սպասա- ւորները էֆէնտիին սուտերուն չըխմանալով կառնեն կը քայնն եղեր .

—Էֆէնտիին օր մը քովը նոր սպասաւոր մ'առնե- յով կըսէ .

—Օղլում , պանա՛ պագ , եանըմտա տուրմաք իսթէրսէն , չու շարթը գապույ էթմէլիսին . պէն հէր կիւն մէմուրիէթիմին պաշընտա , եանըմա կէլիպ կի- անէնլէրէ եաման դօֆտի աթարմ , սէն ասլա սըրըթ- մամալըսըն . պէն դօֆտի աթտըքճա՛ սէն գուրշուն գալէմ իլէ պիր քեաղըա իւղէրինէ չըղը վէր , ախա- մա էվէ ալտէթիմիղտէ , հիսապընը պիտիր պանա՛ հէր պիր եալանա պիրէր զուրուշ վէրէճէլիմ .

Սպասաւորը՝ յանձնառու ըլլալով այս պայմանին , ժամանակ մը կ'տեւէ այսպէս եւ ամեն երեկոյ հա- շիւր ներկայացնելով , նոյն օրը էֆէնտիին 8 կամ 10 , վերջապէս քանի՛ սուտ գլտորեր է նէ՛ այնքան զուրու- չը կառնէ կը նետէ գըպանը .

Օր մը էֆէնտիին , օդոյն ցրտութեանը վրայ խօսք եղած ատեն դարձեալ դօֆտի մը նետելու ելլելով հետեւեալ գէպը կ'պատմէ .

—Էֆէնտիմ , սօղուգ սօղուգ կէչէն սէնէնին սօ- սուղու , բէնճիրէտէ օթուրուրքէն՝ կէօրալում քի պիր քէտի , դարչըքի էվին տամնտան պէրիքի տամա աթ- լայրմ տէրքէն , հավատա տօնտու գալտը . . .

Սպասաւորը դայս լսելուն պէս , մատիտը ձեռ- քէն վար ձգելով , ոտքի կելլէ ու կ'ըսէ .

—Էֆէնտի , պէն պու դօֆտիի գըրդ փարայա չըգամամ .

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Թուրքօ հելլենական սահմանագլխոյ խնդրոյն պայմանագիրն այսօր կամ վաղը դեասպանաժողովէն ստորագրուիլը կ'յուսացուի , առ այդ կայս . իրատէն ելած ըլլալով .

— Գերմ . դեասպան Հացֆէլա կոմսը , Բ . Գրան գերմ . նորոգ 3 պաշտօնավարաց հետ եշ : երեկոյ երլարդի պալատը ճաշի հրաւիրուեր է :

— Բ . Գրան բարձր ակումբներուն մէջ խօսուա- ծին նայելով , Թունուզի Պէյը Գաղղիոյ ընելիք այս գործէն կանխաւ տեղեկութիւն ունի բայց չ'գիտնալ կ'կեղծէ եղեր .

— Յունաստան 7 պահաւոր ապսպրեր է Մար- սիլեա 24 միլիոն ֆրանք՝ զնով 18 ամէն յանձնառ- լու պայմանաւ :

— Այս աւուր վագթ կ'ըսէ թէ ԱպաիւլԱղիղի ըս- պանման հեղինակներէն մէկն ալ Մարաշի իղղէթ պէյ միրալայն եղած է և որ հիմա պիտի դատուի . Այն գնդապետն է՝ որ ատենօք Մարաշի իտարէի ժողո- վոյն մէջ քրիստոնեայ անդամներն նախատելուն հա- մար , Ս . Պատրիարքը և Սոյ Ս . կաթողիկոսը բո- ղոքեր էին , և հիմայ մարդը իր արժանաւոր պա- տուհասը գտաւ .

Միտհատ փաշայի հարցաքննութիւնը երեկ ըս- կըսուեր է 2միւսնոյ մէջ .

— Չարին երկու եղբարքը և հօրեղբայրն կոս- տանդին մեծղուքը մօտերս Երուսաղէմ ուխտագը- նացութիւն մը պիտի ընեն .

— Ագսարայի կողմն ասկէ 6 տարի առաջ Ալի անուն տղայ մը ծներ էր , որուն կանակը ճերմակ մէճիտի մեծութեամբ դրոշմ մը կայ եղեր , երեսը բոլոր պիսակոտ , մէջը թիղ մը խարտեալ մաղ , սը- ռունքներուն վրայ լուսնոյ և աստեղ նմանող պիսակ- ներ (պէնկ) , ծննդական գործարանին վրայ ալ երկու սուրի պատկեր կայ եղեր , սրոց մին անհետացեր է թրիատութենէն ետքը : Այս բանը կարի իսկ հետա- քըրքրական ըլլալով , կ'ըսուի թէ տղան մօտերս վէհ : Սուլթանին պիտի ներկայացուի .

—Թունուզի խնդիրն թէպէտ գործնականապէս ընդհանրապէս գործ մը կատարուած իրողութիւն մ'է այսօր, սակայն Բ.Գուռը կ'ընկնայ, իւր իրաւանցը վերայ վստահանալով, մեծ տէրութեանց մէջ դիւանագիտական խնդրոյ մը վիճակին մէջը դնել: Թունուզի Պէյին հօս Բ. Գրան հեռագրելուն վրայ թէ՛ ինքը Գաղղիոյ կառավարութեան կողմէն իրեն առաջարկեալ հաշտութեան դաշնագիրը զինու զորութեան ստիպմանը ներքեւ բռնի և ակամայ ստորագրելու հարկադրուեր էր, Գուռն ալ փութաց հեռագրել իրեն թէ՛ ինքն ալ այդ դաշնագիրն անզօր և իբրև չեղեալ կ'նկատէ, և թէ Գաղղիոյ բրած այս բռնութեանը դէմ Բ. Գուռը, իբրև գերիշխան վեհապետ Թունուզի, մեծ տէրութեանց բողոքած է:

Սոյն բողոքը, որոյ տէրութեանց հաղորդուելը գեռ չիմացուեցաւ կայս. Իրաւէն ելած չըլլալուն համար, ուղղեալ է Լանարայի, Փարիզի, Փէթրքպոլի, Վիեննայի, Պէրլինի և Հոսթլի օսմանեան դեսպանաց՝ շրջաբերական ծանուցագրի ձևով, յորում կ'ըսէ թէ Բ. Գրան Թունուզի վրայի գերիշխանութեան իրաւունքը եւրոպական Տէրութիւններէ ճանչցուած է, թէ գաղղ. զօրաց Թունուզ մտնելէն առաջ ալ ետքն ալ Գուռը ջանաց Գաղղիոյ հետ համաձայնութիւն մը ձեռք բերել, սորա դանգատանաց պատճառները բառնալու համար, իսկ Գաղղիա բնաւ ականջ չ'կախեց, Թունուզի վրայ Սուլթանին գերիշխանութիւն ունենալը մերժեց, եղած բողոքներն բնաւ նկատողութեան չառաւ, և երկրին մեծ մասը զինու զօրութեամբ հեռագրեալ գրաւեց, օսմ. նաւատորմին Թունուզ խրկուելուն դէմ ալ ըսպառնալեօք դէմ կենալով, և վերջապէս դաշնագրութեանց հակառակ իւր այս ամեն արարքներն պըսակեց մայիս 13 ին հաշտութեան դաշնագիր մը կընքելով Թունուզի պէյին հետ: Արդ Թունուզի պէյը այդ պայմաններն զինուորական ճնշման ներքեւ և երկիրը մեծ վտանգէ մ' ազատելու համար միայն ըստորագրելու ստիպուած է. ուստի և Օսմ. կառավարութիւնը պարտք կ'համարի մերժել զայն դաշնագիրն իբրև ֆրասակար իւր իրաւանց և Թուրքիոյ ամբողջութեանը և բողոքելով այդ գործողութեանը դէմ, կնքեալ սոյն դաշնագիրն իբրև չեղեալ կը նրկատէ:

Վագթ այս առթիւ կ'ըսէ թէ Գաղղիոյ նախարարապետ և կրթական պաշտօնեայ Ժիւլ Ֆերրիի և արտաքին գործոց պաշտօնեայ Պարթէլըմի Սէնդ-Իլէրի մէջ անհամաձայնութիւն ծագեր է Թունուզի խնդրոյն նկատմամբ, առաջինը ուղեւոր մեղմարար գործել, քաղաքական կնճիռ մը չ'յարուցանելու հա-

մար, իսկ Սէնդ-Իլէր պնդելով որ սխառած գործը ամենայն փութով ի դուրս հանուի:

Փարիզի հեռագրը մ'ազ կը ծանուցանէ թէ Թունուզի իշխանին դէմ թշնամութիւն մը ծագած առեն Գաղղիա զիշխանը պիտի որաշտպանէ:

Գաղղիոյ դաշնագիրն ստորագրած ըլլալուն համար ժողովուրդը Պէյին դէմ հանելու գրգռող քառէ մը Թունուզի մեծամեծներ, դաղղիական դեսպանին պահանջմանը վրայ Պէյին հրամանաւը արներին կոխուելով ձերբակալուեր են:

—Յունաստանի Գանձէն 800 հազար Ֆրանքի գողութիւն մը պատահելով, դանձային պաշտօնավարներէն կասկածելի 3 հոգի ձերբակալուեր են:

—Փար կ'ըսէ թէ Վեհ. Սուլթանը Լոնարայի օսմ. դեսպան Միւղիւրիւս փաշայէն դանձային ծըրագիր մ' ընդունելով, զայն դանձուց պաշտօնէին յանձնել է նկատողութեան առնելու համար:

—Վանէն Մէսէնքրի գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ Վանայ կուսակալութեան օդնական Աղաթոն Մկրտիչ էֆէնտիի հեռանալը մեծ ցաւ պատճառներ է տեղւոյն ժողովրդեան: Աղաթոն էֆ. որ ամբողջ Վանայ գաւառին մէջ Գրիստոնեայ մէկ հատիկ պաշտօնեայն է, կ'կարծուի թէ նոր պաշտօն մը պիտի ստանայ Պոլսոյ մէջ:

—Վըսուի թէ Պուլիարիոյ իշխանին՝ սահմանագրութեան ինչ ինչ կետերը փոխելու համար ըրած ձեռնարկը՝ Գերմանիոյ և Ս.ւստրիոյ թերագրութեամբն եղած է և ոչ Ռուսիոյ:

—Քուրիէ կ'հաւաստէ թէ Հիւսէին Աֆնի բաշայի սպարապետութեան օրովը, Աղաթեան էֆէնտիի միջոցաւ Ամերիկայէն բերել տրուած զէնքերուն տեսակն ու հաշիւն ալ քննութեան պիտի առնուին:

—Փէթերպուրկէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ ներքին գործոց պաշտօնեայ Լօրիս Մէլիքօֆ զօրապետի, պատերազմի պաշտօնեայ Միլիութին զօրապետի և դանձուց պաշտօնեայ Պ. Տապաղայի իրենց պաշտօնէն հրաժարելուն վրայ Փէթերպուրկի մէջ մեծ յուզմունք կայ եղեր: Չարը մեծապէս վշտացեր է ասոնց՝ իրենց հրաժարմանը վրայ պնդելուն համար: —Չարթօէ-Սէլօ պալատը, որ Չարին ամարանայն է, տանող երկաթուղւոյ ճանքուն տակ 57 քիլօկրամ վառօդով լեցուն ական մը գտնուեր է, քրօնշտատի մէջ երկու զինուոր ձերբակալուեր են Նիհիլիսթներուն վառօդ ծախած ըլլալուն համար:

—Փարիզի մէջ 13 արհեստական վարժարան կայ, յորոց երնոջներն իրենց ապրուստը անդորր հողալու կարող կըլլան: Այս վարժարանները գացող

աղոց ճնողքն որևէ ծախք չեն վճարեր : Առ նուազըն 13 տարեկան եղողներն կընդունուին , նախակրթական քննութեան անցնելով : Երջանք 3 տարի է այս միջոցին մէջ չը յառաջացողը կճանրուի : Առաջին աարւոյն մէջ փորձուելէն ետք աշակերտն իւր ուղած արհեստը սովորել կսկսի : Երկրորդ տարւոյն մէջ գաղղլական ու անգլիական շեղուաց ուսումն , և աշխարհագրութիւն՝ քիմիաբանութիւն ու դժագրութիւն կաւանդուի , բայց օրուան մեծագոյն մասըն արհեստի յատկացեալ է : Վերջին օրերն որոշեալ է , Փարիզի թաղապետական բոլոր շրջանակաց մէջ մէկ մէկ արհեստական վարժարան բանալ : Չը մոտանաք ըսել , թէ արհեստք ո՛չ միայն տեսական այլ և գործնական կերպիւ կաւանդուին :

—Ապարազեանութիւնը խստիւ պատուիրեց մայրաքաղաքիս զինուորական պահականոցներու պետ սպայից , որ զիչերուան Եսթաբլի աղօթքէն ետքը իւրաքանչիւրն իրեն տեղը գտնուի :

—Այլասարի կողմը աւերակի մը հորին մէջ 3 տարեկան հրեայ տղայ մ'իյնալով կը խղզուի :

ԱՊՏ-ԻՒԼ-ԱԶԻԶԻ ՍՊԱՆՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՆԵՐԸ

Ապտ-իւլ-Ազիլի սպանման պարագայիցը վրայօք երևան ելած դաղտնիքներն հասարակաց զարմանքն և ուշը կ'գրաւեն : Ասկէ ամիս ու կէս առաջ ելլարդի պալատը բացուած քննութեան մէջ յայտնուեր էր թէ սոյն սպանութեան գործոյն մէջ գլխաւոր մեղսակցութիւն ունեցողներն եղեր են նախկին եպարդոս Մէհմէտ Բիւշտի բաշա , որ Այտընի դաւառը իր սեպհական ազարակին մէջ ձերբակալուած է , Չրգ՝ Զմիւռնիոյ կուսակալ Միւհաթ բաշտ , որ Գաղղիոյ հիւպատոսարանն ապաստանած էր , Յրգ՝ նախկին սպարապետ Բէտիֆ բաշա որ Էեմնու արտորուած ըլլալով լսուեցաւ թէ հոս կանչուեր է , կրգ՝ զինուորական դպրոցին այն ժամանակի տնօրէն Սիւլէյման բաշա , որ սրտեքաղմական ատեանի մ'առջիւ դատուելէն յետոյ Պաղտատ արսորուած է , Յրգ՝ Ապտիւլ-Ազիլի առաջին սենեկապետն Փաթրի պէյ , որ Բանկալթի կը նստի , Իեռ ուրիշներ ալ կան ասանցմէ դատ սոյն գործոյն մէջ , բայց անոնց մեղսակցութիւնը երկրորդական կարգէն է , Սյթմ որոշուեր է որ զինուորական , դատական և կրօնական անձանցմէ բաղկացեալ բարձրագոյն ատեանի մ'առաջը դատուին այս անձինքը , իսկ Միւհաթ բաշան Պոլիս կանչելէ առաջ , իրեն անուղղակի ինչ ինչ հարցումներ ուղղուելէն կառահելով գործին ելքը , ժամանակ ունեցեր էր նա Գաղղիոյ հիւպատոսարանն ապաստանելու : —Ճերիտէ կըսէ թէ Միւհաթ բաշա 7

տէրութեանց հիւպատոսներուն դիմելէ վերջը՝ հուսկ ուրեմն Գաղղիոյ հիւպատոսարանն ապաստաներ է , (իսկ ձէրիտէի այս ըսածին ստուգութիւնն կասկածելի է) :

Մթամպուլ ալ կ'գրէ թէ Զմիւռնիոյ գաղղ հիւպատոսն այժմ իւր կառավարութեան հրահանգ խնդրեր է թէ հիւպատոսարանն ապաստանող Միւհաթ բաշան օտմ իշխանութեանց ձեռքն յանձնէ թէ ոչ : —Լուր ելած էր թէ Միւհաթ բաշա Զմիւռնիայէն օտար տէրութեան մարտանաւ մը մտնելով Եւրոպա չուեր է , իսկ Մէսէնճըր կ'ժանուցանէ թէ այդ լուրը անհիմն է և դեռ հոն հիւպատոսարանը կը գտնուի : —Բուրիէ թերթն ալ Միւհաթ բաշայի վըրայ խօսելով , ամանք կ'կարծեն թէ՛ կըսէ՛ Միւհաթ բաշայի ոճիրը քաղաքական ոճիր մ'է , սակայն կ'սրլալին , այդ ոճիրը՝ հասարակային իրաւանց դէմ ոճիր մնէ , պարզապէս մարդասպանութիւն մնէ , վասնզի իր երբ Ապտիւլ-Ազիլ սպանուեցաւ , Սուլթան ըլլալէ դադրած էր : —Գահաղուրկ՝ կայսեր սպանմանը նկատմամբ երևան ելած նորանոր պարագայները մեծ մորմոքում պատճառելով իւր անդրանկի որդւոյն՝ Եուսուֆ Իղէտտին էֆէնտիի , Վեհ. Սուլթանն զանի դշ . օր իւր ներկայութեանը կոչելով միթիթարեր է :

Երբ Միւհաթ փաշա Գաղղիոյ հիւպատոսարանը կ'փախչի , մեծ տէրութեանց բոլոր հիւպատոսներն հոն կ'հաւաքուին խորհրդակցելու համար թէ կըրնան միթէ իրենց պաշտպանութիւնը նուիրել Միւհաթ փաշայի որ կ'ըսէր թէ իրեն թշնամի անձերէ կաղմեալ գատարանին վրայ չ'վստահելէն փախած էր , իսկ մեծամասնութիւնը կորոչէ թէ հիւպատոսներն այս գործոյն միջամտելու իրաւունք չունին , ասոր վրայ գաղղ հիւպատոսը Պօլսոյ գաղղ . դէսպանին կ'հեռագրէ գործը , այս ալ գաղղ . կառավարութեան լորհուրդ հարցնելով , դշ . առաւօս պատասխան կ'ընդունի թէ հիւպատոսարանը Միւհաթ փաշայի ապաստանարանն չ'լինար ըլլար , ուստի զինքն ատկէ ճանբելու է , և այս հրամանն իսկոյն ըԶմիւռնիոյ հիւպատոսին կ'հեռագրուի , Միւհաթի պահուն Զմիւռնիոյ հրամանատարը և ձէվտէթ փաշայ Գաղղիոյ հիւպատոսարանը երթալով , ստորագրեալ ապահովութիւն մ' իրեն տալէն յետոյ թէ բնաւ անձին վրայ բռնութիւն ՚ի գործ պիտի չ'դրուի , այլ ըստ օրինի հարցաքննուելով դատաստանը պիտի տեսնուի , այն ապահովութեան վրայ Միւհաթ փաշա անձնատուր կ'ըլլայ , և որ այժմ՝ օտմ . պատեքաղմական շոգենաւով մը Պոլիս բերուելու վրայ է , ուր կանչուած են նաև Սիւլէյման և Բէտիֆ փաշաներն :

դատուելու, մինակ Մէհմէտ Ռիշտի փաշա ծերունիի և հիւանդ ըլլալուն, միանգամայն սպանութեան գործոյն մէջ այնքան մտաէն մեղսակցութիւն մը չունենալը հասկցուելով, որոշուեր է որ նա հոն Այսընի իւր ազարակին մէջ հարցաքննուի :

Սպանութեան ուղղակի թելադիր հեղինակներըն եղեր են Հիւսէին Ափի փաշա, Միտհաթ փաշա, Տամատ Մահմուտ ձէլալէտտին փաշա, (որ նոյնպէս ձերբակալութեան տակ առնուած է,) և այն ատենի Շէյխիւլիսլամ Խայրուլլահ էֆ. որ հիմայ Մէքքէ է և հոն պիտի դատուի :

Իսկ սպանողներն եղեր են՝ Ապտիւլ Ազիզի Ա. սենեկապետն Ֆախրի պէյ, (որոյ համար կ'ըսուի թէ խելքը կորուսեր է այս օրերս), արքունի ազարակաց երկու պահապաններն, մին նշանաւոր անձի մը զաւակն եղող պալատան երկու թիկնապահներ, Մուստաֆա Փէհրիվան և երեք ներքինիք :

Ստոյգ չէ թէ այժմու Պերլինի օսմ. դեսպան Սաատուլահ պէյ, որ Սուլթան Մուրատայ Ա. քարաուղայն եղած էր, խմանալով վերջին յայտնութիւնները, Պերլինէն եւրոպական ուրիշ քաղաք մը փախած ըլլայ :

Վեհ. սուլթանը նաև հրաման ըրեր է որ օսմ. երեսփոխանական խորհրդարանի սրահը պատրաստուելով բարձրագոյն դատարանը հոն կազմէ իւր ատենանը, ուր հրապարակաւ պիտի տեսնուի յիշեալ արքայասպան եղեռնագործաց դատաստանը :

Վեհ. Սուլթանը հրաման ըրեր է որ ուրիշ քննիչ յանձնախումբ մ'ալ կազմուի, Ապտիւլ Ազիզ կայսեր անձնասպանութիւնը վկայող և տեղեկագիրն ստուշագրող բժիշկներն ալ մի առ մի հարցաքննելու, որոց ստորագրած տեղեկագրին թարգմանութիւնն է հետեւեալը :

« 1876 մայիս 23/4 յունիս և 1293 ձէմազիւլ վիզէ 11/ին կիրակի օր ժամը 11ին կէս օրէն առաջ մեք ստորագրեալ բժիշկներս՝ Մարքո բաշա, Նուրի բաշա, Միլինձէն (ժիւլ) Գարաթէտօրի, Սօթիօ, Տիքսըն, Մարուան, Նուրիճան, Սիատարօ (Կառլար), Վիթալիս Սրանեօյօ, Մարք Մարքէլ, Ժաթրօրուլօ, Միլիթիատի պէյ, Ապտիւլնուր էֆէնտի, Մուսթաֆա էֆէնտի, Սէրվէթ պէյ, Մէհմէտ պէյ և Քասթրօ (ժագ) :

« Հրաման ընդունեցանք Վեհ. Սուլթանին հանդուցեալ Սուլթան Ապտիւլ Ազիզի մահուան պատճառը ստուգելու, և Ջրաղանի կայսերական պալատան պահականոցը պայմար :

« Հոն վայրագութիւն մէկ սենեակը տարին զմեզ, ուր տախտակամածի վրայ անկողնոյ մէջ մարմին մը տեսանք, որ նոր կաւուով մը պատած էր կաւը վերցնելով, տեսանք որ Ապտիւլ Ազիզ նախորդ կայսրն է :

« Մարմնոյն բոլոր անգամները պաղ էին. գունատեալ կաւ թանձր արեամբ ներկուած, Արտեանունքները կիսա-

բաց էին, աչաց ձերմկուցը անթափանցիկ և բերանը կիսաբաց էր : Արեամբ ողողեալ կուանքեր թեւերը և սրունքները ծածկած էին :

« Թեւերուն կտաւը վերցնելով, ձախ թեւին ծալքին տակը, հինգ հարիւրամէթր տարածութեամբ և երեք հարիւրամէթր խորութեամբ՝ մարմնոյն մասերուն վէրքէն բաժնուած ծակ մը տեսանք. վէրքին եզերքը պատառուած և անկանոն էին. իսկ ուղղութիւնը վերէն վար և ներսէն դուրս էր : Այս տեղին երակները կտրուած էին և արմրկան շնչերակին (շահ տամար) հաստութեան երեք քառորդ մասը բացուած էր :

« Աջ թեւին ծալքին մէջ խոտորնակ վէրք մը գտանք նոյնպէս պատառուած, որոյ մեծութիւնը երկու հարիւրամէթր և խորութիւնը մէկուկէս հարիւրամէթր էր :

« Յեզի ներկայացուցին զոյգ մը մըկրատ խիստ սուր տասը հարիւրամէթր երկայնութեամբ : Այս մըկրատները արեամբ ներկուած են և մեզ ըսին թէ նախորդ Սուլթանը այս գործիքով յիշեալ վէրքերը զոյացուցած էր :

« Յետոյ նախորդ Սուլթանին բնակարանը դառնիք, ուր ծովահայեաց մեծ սենեակ մը տարին զմեզ : Հոն սօֆայի մը մէկ անկիւնը պատուհանի մը մօտ արեան դէպ մը և տախտակավայրին փսիաթիւն վրայ մեծաքանակ արեւն տեսանք, որ զանգուած մը եղած էր :

« Ըստ այսմ միաձայնութեամբ կեզրակացնեմք թէ

1) Նախորդ Սուլթան Ապտիւլ Ազիզի մահը, թեւերուն ծալքերուն երակաց վէրքէն տեղի ունեցած արեան հոռու մէն առաջ եկած է :

2) Յեզի ներկայացուած գործիքը այս վէրքերը կարող է պատճառել :

Վէրքերուն ուղղութիւնը և տեսակը ինչպէս նաև մեզ ներկայացուած գործիքը եզրակացնել կուտան մեզ թէ նախորդ կայսրը անձնասպանութեան դիմած է :

« Որոյ վասն ներկայ տեղեկագիրը խմբագրելով Ջրաղանի պահականոցին մէջ, կըստորագրեմք : »

(Ստորագրութիւն)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

ԵՐԵՍՓ. ԸՆՏՐՈՂ. ԺՈՂՈՎՈՅ ԽԱՍԳԻՂԻ

Գիւղիս պակասեալ 3 երեսփոխանաց քուէարկութիւնն այս կիրակի օր Մայիս 3ին կատարուելով, բացարձակ առաւելութեամբ ոչ ոք ընտրուելուն պատճառաւ, առաւելագոյն քուէ ստացողներէն կրկնապատիկ թուով հետեւեալ ընտրիկեաց ցանկը կը ներկայուի, որք են իրենց ստացած քուէից առաւելութեան կարգաւ :

- Մեծապատիւ Էֆէնտիք Նիկողոս Քիւլլիստեան
- Ռուբէն Պուկուրեան
- Իլիաս Տիօնեան
- Ռուբէն Եղըճեան
- Ռէթէն Թաղէտեան
- Սերովբէ Աշնաւոր

Սոյն համեմատական քուէարկութիւնը պիտի կատարուի յառաջիկայ կիրակէ՛ Մայիս 10, ի ժամ 3 1/2, որմէ յետոյ բերուած քուէներն անընդունելի են, իսկ ընտրողք այս անգամ սոյն ցանկէն դուրս անձանց քուէ չեն կրնար տալ : Կը հրաւիրուին Պատուարժան թաղեցիք իրենց պարտականութիւնը կատարելու :

5 Մայիս 81 Մնամ աղօթարար Խասիւղ Նախագահ Ընտրող-ժողովոյ ԳՐԻԳՈՐԵՍ ԵՊԻՍՏՈՍՏՈՍ ԳՊՂՈՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ—ՏԵՈՐԷՆ ԳԻՈՐԳ. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ